Հաստատում եմ

Տնօրեն՝ ________________ Ա. Սարուխանյան

«___»_______________ 2023թ.

Կ.Տ

# ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոցի ՄԿԱԳ-ի

# Տարեկան աշխատանքային պլան

## ՄԿԱԳ՝ Մ. Վիրաբյան

**2023-2024 ուստարի**

## ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Ապագա քաղաքացու ինքնաճանաչման, նրա անձի և անհատականության լիարժեք դրսևորման և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում, ազատ և համակողմանի զարգացած, ազգային արժանապատվությամբ և քաղաքացիական գիտակցությամբ օժտված անձի ձևավորում:

## ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Օգտվել ժողովրդավարական հարաբերություններից, ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները կառուցել գործընթացային հիմքի վրա, բարելավել դասի դաստիարակչական կողմը:
2. Ձևավորել աշակերտների ինքնաճանաչողության, ինքնակառավարման, ինքնուրույն գործելու, վերլուծական մտածողության, անսովոր պայմաններում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու կարողություններ և պատասխանատու վարք:
3. Սովորողներին հաղորդակից դարձնել ազգային և համամարդկային արժեքներին, հայրենասիրության, հումանիզմի, հանդուրժողականության հիմքի վրա նպաստել երեխաների արժեքային համակարգի կազմավորմանը:
4. Պայմաններ ստեղծել երեխաների ճանաչողական և հոգևոր պահանջմունքների բավարարմանը նպաստող կառույցների (արտադասարանական աշխատանք, արտադպրոցական հաստատություններ) գործունեության համար:

## ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Դասղեկների հետ տարվող աշխատանք:
2. Համադպրոցական և արտադպրոցական միջոցառումների պլանավորում և կազմակերպում:
3. Արտադասարանական խմբակների աշխատանքների կազմակերպում և վերահսկում:
4. Դպրոցի կարգապահական, դաստիարակչական, ընդհանուր աշխատանքների կազմակերպում և վերահսկում:
5. Աշխատանքներ երեխաների տարբեր խմբերի հետ (սոցիալապես անապահով, ծնողազուրկ, վարքի շեղում ունեցող, շնորհալի երեխաներ ):
6. Աշխատանք ծնողական խորհրդի և ծնողական համայնքի հետ:

7. Աշխատանք համայնքի իրավապահ մարմինների աշխատակիցների հետ:
8. Աշխատանք սովորողների համակողմանի զարգացման ուղղությամբ.
   ա. Հայրենագիտական և հայեցի դաստիարակություն:
   բ. Հոգևոր,գեղագիտական, բարոյական, էկոլոգիական, իրավական, քաղաքացիական դաստիարակություն:
   գ. Ֆիզիկական դաստիարակության և առողջապահական միջոցառումներ:
9. Աշխատանք աշակերտական խորհրդի հետ:
10. Աշխատանք հիմնական պարտադիր կրթության իրականացման ուղղությամբ:
11. Աշխատանք սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ:
12. Գրադարանի հետ տարվող աշխատանք:
13. Աշակերտների արժեքային համակարգի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանք:

Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի աշխատանքների պլանավորում

2023-2024 ուստարվա

| Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու/ Կատարող | Նշումներ |
|---|---|---|---|
| 1. Վերահսկել առցանց համակարգի միջոցով առաջին դասարանցիների ընդունելությունը և գրանցումը: | Հունիս - օգոստոս | Տնօրեն, Դասվարներ | |
| 2. Բուժքրոջ ներգրավմամբ դպրոցի աշխատակիցների համար կազմակերպել սեզոնային հիվանդությունների տարածման և կանխարգելման վերաբերյալ դասընթաց: | Մինչև սեպտեմբերի 10 | Տնօրեն<br>ՄԿԱ գծով տեղ<br>Բուժքույր | |
| 3. Նշանակել դասղեկներին, հստակեցնել գործառույթները: | Մինչև սեպտեմբեր | ՄԿԱ գծով տեղ<br>Դասղեկներ | |
| 4. Դասվար –դասղեկներին տեղեկացնել ԿԳՄՍ նախարարի ուղեցույցի մասին և մշակել պահանջվող աշխատանքայի պլանները: | Մինչև սեպտեմբեր | ՄԿԱ գծով տեղ<br>Բուժքույր | |
| 5. Դասղեկների հետ տանել բազմաբովանդակ աշխատանք<br>ա. Հրավիրել դասղեկական խորհրդակցություն ամիսը մեկ անգամ՝ամեն ամսվա վերջին ուրբաթ<br>բ. Լսել դասղեկների հաշվետվությունները<br>գ. Դասղեկների համար կազմակերպել մեթոդական ու տեսական օգնություն: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն<br>ՄԿԱ գծով տեղ<br>Դասղեկներ | |
| 6. Դասղեկը պետք է ունենա.<br>ա. Դասղեկին համապատասխան անհրաժեշտ թղթապանակ<br>բ. Աշխատանքային պլան, ամենամսյա՝ օրացույցային | Սեպտեմբեր- հոկտեմբեր | ՄԿԱ գծով տեղ<br>Դասղեկներ | |

| | | | |
|---|---|---|---|
| գ. Աշակերտներին և նրանց ընտանիքներին վերաբերող բոլոր անհրաժեշտ տվյալներ<br>դ. Կարգավորված անձնական գործեր<br><br>7. Դասղեկը պետք է հետևի աշակերտների վարքին, հաճախումնե-րին:<br>ա. Կազմակերպի դասարանական ծնողական ժողովներ:<br>բ. Կազմավորի դասարանական ծնողական խորհուրդ:<br>գ. Ձեռքի տակ ունենալ աշակերտների զբաղվա-ծության ցուցակները: Իմանալ յուրաքանչյուր աշակերտի նախասիրությունները, հետաքրքրու թյունները, կարողությունները:<br><br>8. Բոլոր դասարանների ցուցակները ճշտել և դասարանները տեղաբաշխել: Դասարանները կահավորել ըստ պարետի որոշման ՝առաջնորդվելով ԿԳՄՍ նախարարի ուղեցույցով:<br><br>9. Հետևել և համակարգել դասարանների սանիտարահիգիենիկ վիճակը:<br>Ճշգրտել 2023-2024 ուստարում ուսումնական հաստատություններում գործածվող դասագրքերի ցանկը և վարձավճարները: :Դասագրքերի ցանկի և վարձավճարների չափի մասին տեղեկացնել մ/մ նախագահներին և դասղեկներին:<br><br>10.Վերահսկել դասագրքերի բաշխումը՝ ըստ ժամանակացույցի ՝հետևելով կարգապահական կանոններին:<br><br>11.Սոցիալապես անապահով երեխաների բացահայտում և հաշվառում | <br><br><br><br><br>Ուստարվա ընթացքում<br><br>Սեպտեմբեր (ուստարում՝4-5 անգամ)<br>Սեպտեմբեր-հոկտերմբեր<br><br><br><br><br><br>Մինչև սեպտեմբեր<br><br><br><br><br>Ուստարվա ընթացքում<br><br><br><br><br>Օգոստոսի 25-30<br><br><br><br><br>Օգոստոսի 31-սեպտեմբերի 8<br><br><br><br>Սեպտեմբեր հոկտեմբեր | <br><br><br><br><br>ՄԿԱ գծով տեղ<br>Դասղեկներ<br>ԴԱԿ<br><br><br><br><br>ՄԿԱ գծով տեղ<br>Դասղեկներ<br>ԴԱԿ<br><br><br><br>Տնօրեն<br>ՄԿԱ գծով տեղ<br>Դասղեկներ<br>ԴԱԿ<br><br><br>Տնօրեն<br>ՄԿԱ գծով տեղ<br>Դասղեկներ<br>ԴԱԿ<br><br><br>ՄԿԱ գծով տեղ<br>Դասղեկներ<br>ԴԱԿ<br><br><br>Գրադարանավար<br>Դասղեկներ<br><br><br><br>ՄԿԱ գծով տեղ<br>Դասղեկներ<br>ԴԱԿ | |

| | | | |
|---|---|---|---|
| 13. Միջոցներ ձեռնարկել սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար:Հնարավորության սահմաններում սոցիալ.<br>անապահով ընտանիքների երեխաներին ապահովել<br>դասագրքերով/զեղչված կամ մասնակի զեղչված | Սեպտեմբեր<br>հոկտեմբեր | Տնօրեն<br>ՄԿԱ գծով տեղ<br>Գրադարանավար<br>Դասղեկներ | |
| 14. Կազմակերպել առաջին հանդիպում 1,4-5 դասարան փոխադրված աշակերտների ծնողների և նոր նշանակված դասղեկ –դասվարների հետ: | Սեպտեմբեր<br>1-5 | ՄԿԱ գծով տեղ<br>Դասղեկներ | |
| 15. Կազմակերպել առաջին դասարանցիների մուտքը դպրոց | Սեպտեմբերի<br>1 | ՄԿԱ գծով տեղ<br>ԴԱԿ | |
| 16. Անցկացնել դասարանական ծնողական<br>Ժողովներ: Ծնողներին ծանոթացնել ԿԳՄՍ նախարարի ուղեցույցին:<br>Յուրաքանչյուր դասարանում ստեղծել ծնողխորհուրդ: | Սեպտեմբերի<br>2_5 | Տնօրեն<br>ՄԿԱ գծով տեղ<br>Ռւս գծով տեղ.<br>Դասղեկներ<br>ԴԱԿ<br>Դասղեկներ | |
| 17. Դասարանի ղեկավարի տարեկան աշխատանքային<br>պլանների քննարկում և հաստատում,տեղադրում Պաշարների շտեմարանում | Սեպտեմբեր<br>15 | Տնօրեն<br>ՄԿԱ գծով տեղ<br>Դասղեկներ<br>Դասվարներ | |
| 18. Անցկացնել նոր ուսումնական տարվա<br>առաջին աշակերտական ընդհանուր ժողովը,որի ընթացքում ընտրել դպրոցի աշակերտական խորհրդի և դասարանա-կան ինքնավարության մարմինների ընտրություններ կազմակերպող հանձնախումբ՝ 6 - 9 - րդ դասարաններից: | Սեպտեմբեր<br>18 | Տնօրեն<br>ՄԿԱ գծով տեղ<br>Դասղեկներ<br><br>Տնօրեն<br>ՄԿԱ գծով տեղ<br>Դասղեկներ<br>ԴԱԿ | |
| 19. Կազմակերպել և անցկացնել համադպրոցական ծնողական ժողով | Սեպտեմբեր | Տնօրեն<br>ՄԿԱ գծով տեղ | |

| | | | |
|---|---|---|---|
| 20.Ձևավորել դպրոցի ծնողական խորհուրդ , նրա բոլոր անդամներին ծանոթացնել խորհրդի կանոնադրությանը:<br>ա.Պլանավորել և կոորդինացնել ծնողական խորհրդի գործունեությունը:<br>բ.Կազմակերպել և անցկացնել դպրոցի ծնողխորհրդի նախագահի ընտրություն: | Սեպտեմբեր<br><br><br><br><br>Ուստարվա ընթացքում | Տնօրեն<br>ՄԿԱ գծով տեղ<br>ԾԽ<br><br>ՄԿԱ գծով տեղ<br>Դասղեկներ<br>ԾԽ | |
| 20. Մշակել և կազմակերպել գործողությունների պլան՝ արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման համար՝ այցեր պատմամշակութային կենտրոններ, պատկերասրահներ,կինոդիտումներ | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով տեղ<br>Դասղեկներ<br>ԾԽ<br>Դասընթացավարներ | |
| Կազմակերպել և անցկացնել սեմինար-հանդիպումներ <<Դաստիարակության դրական մոտեցումներ>> թեմայով :<br>ա. Հասկանանք երեխային և ինքներս մեզ:<br>բ. Ի՞նչ է պատիժը:Պատժի տեսակները:<br>գ/ Երեխաների իրավունքները:<br>դ/ Դրական դաստիարակչական մոտեցումներ:<br>ե/ Ակտիվ ունկնդրում:<br>զ/ Խրախուսում:<br>է/ Սթրեսի կառավարում: | Սեպտեմբերի 14-19 | ՄԿԱ գծով տեղ.<br>Ուս. գծով տեղ.<br>Սոցմանկավարժ<br>Դասղեկներ | |
| 21.Նոր ընդունված աշակերտների կրթական կարիքների գնահատում,Iդասարանների սոցանձնագրերի կազմում,<br>II-IX դասարանների սոցանձնագրերի թարմացում: | Սեպտեմբերի 14-19<br><br><br>Սեպտեմբեր<br>Հոկտեմբեր | Տնօրեն ՄԿԱ գծով տեղ<br>Ուս . գծով տեղակալ<br>Սոցմանկավարժ<br>ՄԿԱ գծով տեղ<br>Լոգոպեդ,<br>Դասվարներ | |
| 22. ԿԱՊԿՈՒ աշակերտների ցուցակի ճշգրտում | Սեպտեմբերի 25 | ՄԿԱ գծով տեղ<br>ԴԱԿ<br>ԱԽ | |
| 23. Դպրոցի առաջին դասարանների աշակերտների խոսքի հետազոտում | | | |
| 24. Ընտրել աշակերտական խորհրդի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Նախագահ:<br>ա. Աշակերտական խորհրդին ընդգրկել դպրոցում իրականացվող միջոցառումներին և մրցույթներին:<br>բ. Հաշվի առնել աշակերտական խորհրդի կարծիքներն ու առաջակությունները:<br><br>25. ՀՀ պետական խորհրդանիշերի անկյունի նորացում:<br>21. Անկախության օրվան նվիրված համադպրոցական միջոցառում/տողան/<br>« Անկախ Հայաստանս" խորագրով ձեռքի աշխատանքների ցուցահանդես:<br><br>26. Օգնել աշակերտական խորհրդին ուսումնդաստիարակչական,սոցիալական մշակութային, տեղեկատվական հանձնախմբեր ստեղծելու, նրանց գործունեությունը կազմակերպելու ուղղությամբ:<br><br>27. Հաստատել աշակերտական խորհրդի 2023 – 2024 ուստարվա պլանը:<br><br>28.Լսել հաշվետվություններ հանձնախմբերի կատարած աշխատանքների մասին և օգնել տեղ գտած թերությունները վերացնելու ուղղությամբ:<br><br>29. Ուսուցչի օրը<br>ա. ուսուցչի մեծարման ցերեկույթ<br><br>30. Թարգմանչանց տոն<br><br>31.Ստեղծել <<Մասնագիտական զարգացման դպրոց>>՝ աշակերտների մասնագիտական կողմնորոշումը ճիշտ նպատակաուղղելու համար:<br>Կազմակերպել | Սեպտեմբերի 24-ից Սեպտեմբերի 20_25<br><br>Սեպտեմբերի 26-30<br><br>Հոկտեմբերի 5<br><br>Ուստարվա ընթացքում<br><br>Հոկտեմբերի 5<br><br>Հոկտեմբերի 9<br><br>Ուստարվա ընթացքում<br><br>Ամիսը մեկ անգամ | <br><br>ՄԿԱ գծով տեղակալ<br>Դասղեկներ<br>Հլ. մ/մ<br>ԴԱԿ<br><br>ՄԿԱ գծով տեղ<br>ԴԱԿ<br><br>Տնօրեն<br>ՄԿԱ գծով տեղ<br>ԴԱԿ<br><br>ՄԿԱ գծով տեղ<br>ԴԱԿ<br>ԱԽ<br><br>ԴԱԿ<br>ԱԽ<br><br>ՄԿԱ գծով տեղ<br>Դասղեկներ<br>ԴԱԿ<br>Հլ. մմ<br><br>ՄԿԱ գծով տեղ<br>Հոգեբան<br>Սոցմանկավորժ<br>ԴԱԿ | |

| | | | |
|---|---|---|---|
| ա.իրականացնել մասնագիտական կողմնորոշման սեմինար դպրոցում<br>բ. Տրամադրել աշակերտներին տեղեկատվական գրականություն<br>գ. Կիրառել համացանցային որոնողական համակարգեր դպրոցներում,<br>դ. Դեմ առ դեմ խորհրդատվություններ, խմբային խորհրդատվություններ,<br>ե. Տեսաֆիլմերի դիտում և քննարկում մասնագիտական կողմնորոշման մասնագետի հետ,<br>զ. Էքսկուրսիաներ ձեռնարկություններ, հիմնարկություններ և ուսումնական հաստատություններ | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով տեղ.<br>Դասղեկներ<br>Ծխ | |
| 32. Աջակցել ծնողների և դասղեկների արդյունավետ համագործակցությունը:<br>ա. Աջակցել արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը: | Հոկտեմբեր-նոյեմբեր | ՄԿԱ գծով տեղակալ<br>ԴԱԿ<br>Դասղեկներ<br>ՄԿԱ գծով տեղակալ<br>ԴԱԿ<br>Դասղեկներ | |
| 33. Անցանկալի վարք ցուցաբերող երեխաների հաշվառում: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն<br>ՄԿԱ գծով տեղակալ<br>ԴԱԿ<br>Դասղեկներ | |
| 34. Համագործակցել<br>ա.Վանաձորի ՆԳ անչափահասների տեսչու-թյան հետ: Նրանց ներկայացուցիչներին հաճախակի հրավիրել դպրոց: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով տեղակալ<br>ԴԱԿ<br>Դասղեկներ<br>Զինղեկ | |
| 35. Աշխատանք տանել պարտադիր ուսուցումից դուրս մնացած պատանիներին ու աղջիկներին դպրոց վերադարձնելու ուղղությամբ; | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով տեղ. | |
| 36. Կազմակերպել և անցկացնել արտակարգ իրավիճակների կանխման, դրանց կանխարգելման ու հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումներ:<br>ա.Աղետների ռիսկի նվազեցման կրթություն_ դասընթացներ<br>բ.վտանգի բացահայտում և գնահատում_զրույցներ | Դեկտեմբերի 7-9 | ՄԿԱ գծով տեղ. | |

| | | | |
|---|---|---|---|
| գ.բնական և տեխնածին վտանգներ_պարապմունքներ | Դեկտեմբերի 24 | Դասղեկներ<br>ԴԱԿ | |
| 37. 80 և ավելի ժամ բացակայություն ունեցող<br>աշակերտների ցուցակի ճշտում: | Դեկտեմբերի 25<br>/պարբերաբար/ | ՄԿԱ գծով տեղ.<br>Դասղեկներ<br>ԴԱԿ | |
| 38.Դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագրի,նրանց կատարողականի, դասղեկի<br>թղթապանակի ստուգում: | Դեկտեմբերի վերջ | ՄԿԱ գծով տեղ.<br>Դասղեկներ<br>ԴԱԿ<br>ԾԽ | |
| 39.Ամանորյա միջոցառումներ<br>ա. Դասարանների ձևավորում/մրցույթ `ամենազեղեցիկ դասարանը/<br>բ. Դիմակահանդես/VII-IX դասարաններ/ | Դեկտեմբերի վերջ | ՄԿԱ գծով տեղ.<br>դասղեկներ | |
| 40.Կիսամյակային ծնողական ժողովների կազմակերպում: | | ՄԿԱ գծով տեղ.<br>Ֆիզ.ուսուցիչներ | |
| 41.ՀՀ պաշտպանության բանակին նվիրված<br>ա.Անցկացնել ֆիզկուլտուրայի , միջդասարանային,միջդպրոցային մրցումներ: | Հունվար-<br>12-16<br><br>Հունվարի<br>25-30 | ՄԿԱ գծով տեղ<br>Զինղեկ<br>ԴԱԿ<br>ԱԽ<br>Դասղեկներ<br>Ն զորամաս | |
| 42.Ռազմահայրենասիրական աշխատանք<br>Կազմել աշխատանքային և միջոցառումների պլան և հետևել վերջիններիս կատարմանը:<br>1.Համակարգել դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացը<br>2. Հստակեցնել դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացի մեթոդները, ձևերն ու միջոցները<br>3. Բարձրացնել դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության և նախազորակոչային պատրաստության խնդիրների լուծման մեթոդների, միջոցների ու ձևերի արդյունավետությունը | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով տեղ<br>Զինղեկ<br>ԴԱԿ<br>ԱԽ<br>ԴասղեկներՆ զորամաս | |

| | | | |
|---|---|---|---|
| 4. Կազմակերպել օնլայն ճանաչողական էքսկուրսիաներ դեպի պատմական վայրեր և հուշարձաններ /պատրաստել լուսանկարներ, նկարներ, տեսահոլովակներ և ցուցադրություններ կազմակերպել/<br>5. Այց՝ ՀՀ ԶՈւ, զորամասեր, մարտական փառքի վայրեր | Ուստարվա ընթացքում<br><br>Փետրվարի<br>Մարտ | ՄԿԱ գծով տեղ<br>ԴԱԿ<br>Դասղեկներ | |
| 43. Միջին դասարաններում դասղեկական ժամերի դրվածքի ուսումնասիրում<br>ա. 5Ա <<Իմ հերոսը>><br>բ. <<Երաժշտությունը և արվեստը>><br>գ.6Ա<<Ջրային պաշարների պահպանման միջազգային օր>><br>դ. 6Բ <<Ուժեղ լինել նշանակում է...>><br>ե. 7Ա <<Մտորում են մեծերը>><br>զ. 8 <<Ինչ է կոնֆլիկտը>> Կոնֆլիկտի առաջացման պատճառները | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով տեղ<br>ԴԱԿ<br>Դասղեկներ<br>Գրադարանավար | |
| 44. Գիրք նվիրելու օրվան նվիրված միջոցառումներ<br>ա. Գրքերի հավաքագրում և գրադարանի գրքերի ցանկի համալրում<br>բ. Ձևավորել խումբ և ստուգել դասագրքերը, ընթերցասերների մասնակցությամբ վերանորոգել մաշված գրքերը/գրադարանում | Փետրվարի<br>19 | ՄԿԱ գծով տեղ<br>Տարրական դաս.մմ<br>դասղեկներ | |
| 45. Մայրենիի օրվան նվիրված կազմակերպել<br>«Գրենք գեղեցիկ» -գեղագրության մրցույթ/I-IV դասարաններ/ | Փետրվարի<br>20-21 | ԴԱԿ<br>ԱԽ | |
| 46. Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցարում: | Մարտ<br>8 | Տնօրեն<br>ՄԿԱ գծով տեղ<br>դասղեկներ | |
| 47. Տարրական դասարաններում դասղեկական ժամերի դրվածքի ուսումնասիրություն<br>ա. 2Ա <<Գարունն ինչով է գեղեցիկ>> մարտ<br>բ.<Դու իմ քնքուշ , անուշ մայրիկ>><br>գ.3Ա <<Այվազովսկու նկարների աշխարհում>> | Մարտ-ապրիլ | | |

| | | | |
|---|---|---|---|
| դ. 3 Բ <<Հարության տոն>><br>ե .4Ա <<Երեխաների իրավունքներ>>,<br><< Կարող եմ , ուզում եմ , պետք է>> մարտ<br>զ. 4 Բ << Գարնանային ծաղիկներ>> | Մարտ- ապրիլ | Տնօրեն<br>ՄԿԱ գծով տեղ դաստեկ | |
| 48. Բացօթյա միջոցառում <<Զատիկ>> թեմայով | Մարտ- ապրիլ<br>/ապրիլի 9/ | ՄԿԱ գծով տեղ դաստեկ | |
| 49. <<Ջրի միջազգային օր>> դաստեկի ժամ բաց դաս: | Մարտ<br>22 | Տնօրեն<br>ՄԿԱ գծով տեղ<br>դաստեկներ | |
| 50. Մայրության տոնին նվիրված դաստեկի բաց դասեր | Ապրիլի<br>7-8 | | |
| 51.Կազմակերպել <<Առողջության օր>>՝առողջապահության համաշխարհային օրվան նվիրված համադպրոցական միջոցառում-ակցիա:Դպրոց հրավիրել բժիշկներ՝ տարբեր մասնագիտությունների գծով և կազմակերպել կլոր սեղան-հանդիպումներ, խորհրդատվություններ, սեմինարներ: | Ապրիլի<br>7 | ՄԿԱ գծով տեղ<br>ԴԱԿ<br>Բուժքույր<br>Դաստեկներ | |
| 52. Կազմակերպել միջոցառում՝ նվիրված Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին: | Ապրիլի<br>24 | ՄԿԱ գծով տեղ<br>Դաստեկներ<br>ԴԱԿ<br>ԱԽ | |
| 53. Կազմակերպել միջոցառումներ՝ նվիրված մայիսյան եռատոնին: | Մայիս | ՄԿԱ գծով տեղ<br>Դաստեկներ<br>ԴԱԿ<br>ԱԽ | |
| 54. Հրաժեշտ այբենարանին<br>1 Ա , 1 Բ դասարաններ | Մայիս | ՄԿԱ գծով տեղ<br>Դաստեկներ | |
| 54.Կազմակերպել 9-րդ դասարանցիների վերջին դասի հանդիսավոր արարողությունը: | Մայիս | ՄԿԱ գծով տեղ<br>Դաստեկներ<br>ԴԱԿ | |
| Համագործակցել<br>ա. Հասարակական և միջազգային կազմակերպությունների,թանգարան ների, դպրոցների հետ՝ ATP, VTC, Դիլիջանի | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով տեղ<br>Դաստեկներ<br>ԴԱԿ<br>ԾԽ | |

| | | | |
|---|---|---|---|
| Կենտրոնական դպրոց, Դիլիջանի Միջազգային դպրոց, Կենրոնական Բանկ,Առավոտ, Շող հկ.,Գեղագիտության Ազգային կենտրոն | | | |